# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 106-Լ

«15» 12 2023 թ. ք. Երևան

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի Ն 46 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կազմում Լիլիթ Սոսի Գրիգորյանի անդամության ժամկետը լրանալու հանգամանքը, վերջինիս Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կազմում նշանակելու նպատակով, ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Լիլիթ Սոսի Գրիգորյանին՝ 4 տարի ժամկետով՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 17-ը:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի Ն 46 հրամանում.

«Լիլիթ Սոսի Գրիգորյանին - Երևան քաղաքի դատախազ՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 17-ը»

պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Լիլիթ Սոսի Գրիգորյանին - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 17-ը»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2023 թվականի դեկտեմբերի 17-ից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**